

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ**

**ԾԱՂԿԱՅՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ՀՆԳԱՄՅԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ**

ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՀԱԿՈՒՅԱՆԸ**



Հաստատվել է համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարիի 15-ի N 17-Ն որոշմամբ

(Նիստի ամսաթիվը)

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2 Համայնքի սոցիալտնտեսական իրավիճակը	4
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը	6
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	6
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) Վերլուծություն	7
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	10
3.1 Համայնքի զարգացման տեսլական.....	10
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	14
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	16
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	17
Հավելված 1-Ծրագրերի անձնագրեր.....	18

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի 2023-2027թթ. Հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2027 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Չարգացման ռազմավարության և գերակայություններ սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ): Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է չորս բաժիններից՝

1. **Համայնքի իրավիճակի նկարագրում.**
2. **Նպատակների Սահմանում և գործողությունների պլանավորում.**
3. **Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր Ֆինանսավորում.**
4. **Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ:**

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի ծրագիրը կապված համայնքի բնակիչների կենսական պայմանների բարելավման, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը և գյուղերի վարչական ղեկավարները: Զննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ծաղկահողիտ համայնքը ձևավորվել է 2017թ. նոյեմբերի 5-ին: Համայնքի կազմում ընդգրկված են 10 բնակավայրեր՝ Ծաղկահովիտ, Վարդաբլուր, Գեղարոտ, Ծիլքար, Լեռնապար, Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղածոր, Բերքառատ: Համայնքն ունի եկեղեցիներ, որոնք կառուցվել են 1864-1868թթ-ին, պատմամշակութային հուշարձաններ, մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակների:

Համայնքը գտնվում է Արագած լեռան հս. և Փամբակի լեռների հվ. լանջերին, ծովի մակերևույթից 2080-2150 մ բարձրության վրա: Հյուսիսից սահմանակից է Լոռու մարզի, արևելքից Ալազյազ համայնքի, իսկ արևմուտքից Ծիրակի մարզի հետ: Համայնքի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Համայնքում հաճախակի են երաշտ տարիները, որից հիմնականում տուժում են գյուղացիական տնտեսությունները, երբեմն ունենալով ահռելի վնասներ /ռիսկային է/:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 228,9 կմ², հեռավորությունը մայրաքաղաքից՝ 70 կմ, մարզկենտրոնից՝ 51 կմ:

Համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 10516 մարդ, որից՝ ըստ տարիքի՝ 0-6 տարեկան 645 մարդ, 7-17 տարեկան – 1476 մարդ, 18-62 տարեկան – 7756 մարդ, 63 և ավելի տարեկան 684 մարդ: Ըստ սեռի՝ 5116 իգական, 5445 արական: կենսաթոշակառուների թիվը – 807, Այդ թվում հաշմանդամներ - 162 մարդ: Միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 64 մարդ: Աշխատունակներ – 8056 մարդ գրադավածներ – 2897 մարդ, գործազուրկներ – 1136 մարդ, տնային տնտեսությունների թիվը – 2639, ընտանիքների թիվը - 2821 ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 165, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 151:

բնակելի տարածքներում բնակչության միջին խտությունը 1 կմ² վրա կազմում է 46 մարդ: Բնակելի տների քանակը կազմում է 2279, այդ թվում բազմաբնակարան շենքերի քանակը 7 /252 բն./:

Առավել խիտ բնակեցված բնակավայրերն են՝ Հնաբերդը, Ծաղկահովիտը, Նորաշենը և Գեղադիրը,։ ՀՀ պետական սահմանին ամենամոտ հեռավորության վրա գտնվում են՝ Նորաշեն 40 կմ, Գեղադիր 45 կմ բնակավայրերը: Բնակավայրերի միջին հեռավորությունը համայնքապետարանից 16 կմ է:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի 2023թ. փաստացի մուտքերի ուղղությունների տեսակարար կշիռներն ընդհանուր մուտքերի մեջ սեփական մուտքերը (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) կազմում են ընդամենը 26 %, իսկ պաշտոնական դրամաշնորհների (պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմում է 64 %: Սա նշանակում է, որ համայնքի բյուջեի մուտքերի մեծամասնությունը ստացվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ուղղությամբ, այսինքն համայնքի ֆինանսական անկախության (ինքնուրույնության) աստիճանն ցածր է և համայնքը մեծ կախվածության մեջ է գտնվում ՀՀ պետական բյուջեից:

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

2023 թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 7850 , այդ թվում կով` 5255, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը` 6400, այդ թվում ոչխար` 5200, այծ` 104: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ 1050 թև, առավելապես` հավեր` հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Համայնքում գործում է 1 մասնագիտական ուսումնարան և 10 միջնակարգ դպրոց, նախատեսված մինչև 2500 աշակերտի համար, ներկայումս սովորում են 1545 աշակերտ: Դպրոցներում աշխատում են 265 մարդ, որոնցից 212-ը մանկավարժներ են: Համայնքում կա 4 մանկապարտեզ, Նորաշեն, Հնաբերդ, Գեղաձոր և Ծաղկահովիտ բնակավայրերում: 2024թ. Նախատեսվում է գործարկել ևս մեկը: Առաջադիմություն ունեցող աշակերտները, տարեկան միջին հաշվով 50-60-ը, ուսումը շարունակում են Վանաձորի և Երևանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման առաջիկա հինգ տարիների համար սահմանված ծրագրերի ցանկը և ֆինանսավորման չափը այսպիսին է.

h/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Ներհամայնքային /ներառյալ 10 բնակավայրերը/ ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	35 000.0
2.	Ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	20 000.0
3.	Ջրագծերի կառուցում /ներքին և արտաքին ցանցեր/	50 000.0

4.	Գազաֆիկացման ներքին ցանցի կառուցում	140 000.0
5.	Գյուղեր տանող ճանապարհների ասֆալտապատում 8 կմ	400 000.0
6.	Մշակութային տների կապիտալ վերանորոգում	120 000.0
7.	Բազմաբնակարան շենքերի կապիտալ վերանորոգում	40 000.0
8.	Զրամբարի կառուցում	1 500 000.0
9.	Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում (տեխնոպարկի ստեղծում)	150 000.0
10.	Կաշվի վերամշակման արտադրամասի կառուցում	100 000.0
11.	Կաթի վերամշակման արտադրամասի կառուցում	120 000.0
12.	Հանգստյան գոտիների կառուցում	200 000.0

**2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն
և ֆինանսական կանխատեսումները**

Աղյուսակ 1

Հ/Հ	Եկամտատեսակները	2023թ. նախատ.	2023թ. փաստ.	2024թ. կանխ.	2025թ. կանխ.	2026թ. կանխ.	2027թ. կանխ.
1	2	4	5	6	7	8	9
1000	ԸՆԴԱՍԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)	665 861 750	30 386 571	670 000 000	675000000	680000000	685000000
1100	այդ թվում՝ 1.2ԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150)	143 870 000	7 850 471	148 008 250	150000000	152000000	154000000
1110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112 + տող 1113)	96 892 000	2 645 390	99892000	100883750	101883750	102883750
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	1 320 000	650,00	1 320 000	1 400 000	1 400 000	1 400 000
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	57 612 000	2 137 128	57 612 000	57 932 000	57932000	57932000
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	37 960 000	507 612	37 960 000	38000000	38000000	38000000
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	45 278 000	4 380 541	46 416 250	47 316 250	48 316 250	49 316 250
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար	45 278 000	4 380 541	46 416 250	47 316 250	48 316 250	49 316 250

1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317 տող 11318 + տող 11319), այդ թվում՝	900 000	290 000	900 000	1000000	1000000	1000000
1131	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ակոնիտային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	900 000	290 000	900 000	1000000	1000000	1000000
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝	800 000	130 000	800 000	800 000	800 000	800 000
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար	800 000	130 000	800 000	800 000	800 000	800 000
1150	1.5 Այլ հարկային եկամուտներ (տող 1151 + տող 1155), այդ թվում՝	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐԶՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)	495 864 550	0.00	495 864 550	498864550	501864550	504864550
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0,00	X	0,00	0,00	0,00	0,00
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոն. դրամաշնորհներ՝ ստացված այլ պետ-ի տեղ. ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով	0,00	X	0,00	0,00	0,00	0,00
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00

1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0.0	X	0.0	0,00	0,00	0,00
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256), որից՝	275 417 700	22 951 500	275 417 700	275 417 700	275 417 700	275 417 700
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	275 417 700	22 951 500	275 417 700	275 417 700	275 417 700	275 417 700
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262)	220 446 850	X	220 446 850	220 446 850	220 446 850	220 446 850
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	220 446 850	X	220 446 850	220 446 850	220 446 850	220 446 850
1262	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0,00	X	0,00	0,00	0,00	0,00
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	26 127 200	295 600	26 127 200	26 135 450	26 135 450	26 135 450
1310	3.1 Տոկոսներ այդ թվում՝	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1311	Օրենքով նախատեսվ. դեպքերում բանկ. համայնքի բյուջեի ժամ. ազատ միջոց-ի տեղաբաշխ-ից և դեպոզիտ-ից ստ.տոկոսավճար-	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1320	3.2 Շահաբաժիններ	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334)	10 800 000	217 400	10 800 000	10 808 250	10 808 250	10 808 250
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	7 000 000	247 400	7 000 000	7 008 250	7 008 250	7 008 250
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	2 500 000	270 000	2 500 000	2 500 000	2 500 000	2 500 000
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00

1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	1 300 000	100 000	1 300 000	1 300 000	1 300 000	1 300 000
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343)	2 227 200	621 000	2 227 200	2 227 200	2 227 200	2 227 200
1341	Համայնքի սեփ. հանդ, այդ թվ.տիրագուրկ, համայնքին որպես սեփ. անց.ապրանք-ի (բաց. հիմն. միջոց, ոչ նյութ. կամ բարձրարժեք ակտիվ հանդիս., ինչպես նաև համայնքի պահուստ. պահվող ապրանք. արժեք.) վաճ-ից մուտք	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	2 227 200	2 227 200	2 227 200	2 227 200	2 227 200	2 227 200
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝	950 000	0 00	950 000	950 000	950 000	950 000
1351	Տեղական վճարներ (տող 13501+տող 13502+տող 13503+տող 13504+տող 13505+տող 13506+տող 13507+տող 13508+տող 13509+տող 13510+տող 13511+տող 13512+տող 13513+տող 13514+տող 13515+տող 13516+տող 13517+տող 13518+տող 13519+տող 13520) , այդ թվում՝	8 500 000	500 000	8 500 000	8 500 000	8 500 000	8 500 000
1357	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար	3 000 000	300,000	3 000 000	3 000 000	3 000 000	3 000 000
1357	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար	5 500 000	5 500 000	5 500 000	5 500 000	5 500 000	5 500 000
1358	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	1 000 000	67 200	1 000 000	1 000 000	1 000,0	500,0
1360	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00

1370	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1380	Համայնքի բյուջե մուտքագրվող այլ վարչական գանձումներ	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393)	3 600 000	328 000	3 600 000	3 600 000	3 600,0	3 600,0
1391	այդ թվում՝ Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	89 082 980	89 082 980	89 082 980	89 082 980	89 082 980	89 082 980
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	3 600 000	3 0 000	3 600 000	3 600 000	3 600,0	3 600,0

Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերի 96 %-ը ոռոգման համակարգ չունի, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի ստանում: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, չկա կաթի մթերման և կաթնամթերքի վերամշակման արտադրամաս:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ՝ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում: Ծաղկահովիտ համայնքը գտնվում է լեռնային շրջանում, ձմեռը երկարատև է, որը խոչընդոտ է հանդիսանում անասնապահության համար:

Համայնքի գյուղատնտեսությանը մեծ վնասներ են հասցնում կարկուտը, սակավաջրությունը և անձրևային քիչ տեղումները:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտները բավականին քիչ են, այդ իսկ պատճառով համայնքում հնարավոր չէ իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք առավել կնպաստեն համայնքի զարգացմանը:

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
- Բնակավայրին հարակից անտառամերձ գոտիների առկայությունը
- Համայնքում միջնակարգ դպրոցների և համայնքային կենտրոնների առկայությունը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Տնտեսական ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը և համեմատաբար լավ վիճակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղեր տանող և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների անբարեկարգ վիճակը
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի և ներքին ցանցի ոչ բավարար վիճակը
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգերի բացակայությունը
- Համայնքապետարանի, և բազմամբակարան շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքում աղբահանության կազմակերպման ցածր մակարդակը, կապված աղբամսների բացակայությունից և բնակիչների վճարունակությունից:
- Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- Խոտհարքների չափաբաժնի պակաս լինելը և վարելահողերի 20%-ով չմշակելը
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, մայրաքաղաքի և այլ քաղաքների հետ
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Համայնքում արտադրամասերի բացակայությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր գյուղերում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցումը կնպաստի բնակիչների առօրյա հոգսերի թեթևացմանը, քանի որ տարբեր հեռավորություններից դուրս գալու են ջուր բերում
- Գյուղեր տանող ճանապարհի ասֆալտապատումը կնպաստի համայնք բերվող և համայնքից տարվող ապրանքների և առևտրականների ազատ տեղաշարժը, հեշտացնելով ապրանքների իրացումը
- Չբոսաշրջության բարենպաստ պայմանների բարելավումը, հանգստյան գոտիների ստեղծումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, գյուղատնտեսական ապրանքների իրացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

1. Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
2. Սելավերի պատճառով ներհամայնքային ճանապարհների քանդման վտանգը
3. Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
4. Ոչ հաճախակի աղբահանության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը

5. Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը /տեխնիկաների սակավությունը/
6. Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ մանկապարտեզների և դպրոցների հետագա լիարժեք գործունեությունը

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայրեր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն**

- է
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկության թվի նվազեցում ,
- տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ հանրային լուծումների միջոցով / կիսամյակը գոնե մեկ անգամ /
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով:

Համայնքի զարգացման 2023-2027թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում,

- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության պայմանների ստեղծում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու սննդի առումներով),
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում համայնքային հիմնական ենթակառուցվածքների (գյուղապետարան, համայնքային կենտրոն, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով:

հիմնական նպատակներն են՝

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության պայմանների ստեղծում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու սննդի առումներով),
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում համայնքային հիմնական ենթակառուցվածքների (գյուղապետարան, համայնքային կենտրոն, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով:

- **Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը առաջիկա հինգ տարիների համար արտահայտված տոկոսներով**

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2023թ. փաստ. /հազ. դրամ/	2024թ. %	2025թ. %	2026թ. %	2027թ. %	Ընդամենը աճ
1	2	3	4	5	6	7	8
1	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1.320.0	0 %	0,6 %	0,0 %	6,7 %	1,8 %
			1.320.0	1.400.0	1.400.0	1.500,0	180,0
2	Հողի հարկ	57.612.0	0 %	1,1 %	0,0%	3,0 %	1,0 %
			57.416.2	57.932.0	57.932.0	57.932.,0	320,0
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	45.278.0	2,4 %	1.5 %	2,1 %	3,1 %	2,3 %
			46.416.2	47.316.2	48.316.2	49.316.2	4038.0
4	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության	1.700.0	5,5 %	0,0 %	0,0 %	0,0 %	1,4 %
			1.800.0	1.800.0	1.800.0	1.800.0	100.0

վճարներ							
6	Հողի վարձակալությունից եկամուտներ	10.800.0	0,0%	1,1 %	0,0 %	0,0%	0,27 %
			10.800.0	10.808.2	10.808.2	10.808.2	8,2
6	Տեղական տուրքեր և այլ վճարներից	1.032.8	26,0%	15,0 %	18,0 %	14,0%	18.25 %
			3.932.8	4.608.0	5.608.5	6.509.0	5.477.0
6	Այլ եկամուտներ	26.127.2	0,0%	0,0 %	1,1%	0,0%	0,27 %
			26.127.2	26.127.2	26.135.4	26.135.4	8,2

- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը արտահայտված տոկոսով:

		Բնակիչների ընդհանուր թիվը 2023թ. փաստացի	Բնակիչների ընդհանուր թիվը 2024թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2025թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2026թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2027թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվ ընդ.
1	Ընդամենը	10561	10700	11000	11400	11800	12000
2	Աճը տոկոսներով	0%	2 %	2,5 %	5 %	8 %	10 %

- Համայնքում առկա անասնագլխաքանակը և կանխատեսումը առաջիկա հինգ տարիների համար

N	Անվանումը	2023 թ. փաստացի	2024թ. կանխատ.	2025թ. կանխատ.	2026թ. կանխատ.	2027թ. կանխատ.
1	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	7850	8000	8500	9000	9500
2	Ոչխարների և այծերի գլխաքանակը	6400	7000	7500	7800	8000
3	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	9050	9200	9500	10000	10500

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում /ներառյալ 10 բնակավայրերը/

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

1. Համայնքային ենթակայության բոլոր 10 բնակավայրերի փողոցները հողային են, խճախատ: Խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2023-27թթ. ընթացքում, ասֆալտապատումը առաջնահերթ խնդիրները լուծելուց հետո:
2. Համայնքի 2023թ. բյուջեում նախատեսել 7 000.0 հազ. դրամ գումար՝ վերանորոգելու ներհամայնքային կենտրոնական փողոցները:

3. Մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:

2. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի կառուցման շարունակություն

Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով այդ փողոցը լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

Մինչև 2023թ. Հունիս ամիսը պատվիրել և պատրաստել ներհամայնքային փողոցներում միակողմանի արտաքին լուսավորության համակարգի շարունակության անցկացման աշխատանքներ ի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով մետաղափակապատներ՝ 6 մ բարձրությամբ, 95 մմ տրամագծով, իրարից 40 մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասյան վրա՝ 1 լուսային սարքավորում, և էլեկտրահաղորդալարեր՝ 16 մմ հաստությամբ:

3. Ջրագծերի կառուցում /ներքին և արտաքին ցանցեր/

Ձեռք բերել անհրաժեշտ քանակության տարբեր տրամաչափերի խողովակներ, ինչպես նաև մոնտաժման համար այլ միջոցներ: Համայնքային բյուջեով նախատեսել տարեկան 5000,0 միլիոն ՀՀ դրամ:

4. Գազաֆիկացում

Գազաֆիկացման աշխատանքների համար պատվիրել նախագծա-նախահաշվային գործեր, համայնքի բյուջեում նախատեսելով մինչև 55 000,0 դրամ:

5. Գյուղեր տանող ճանապարհների ասֆալտապատում 8 կմ

Գյուղեր տանող ճանապարհների ասֆալտապատում 8 կմ, համայնքի բյուջեի միջոցները բավարար չեն, համագործակցել այլ ներդրողների կամ պետական սեկտորի հետ:

6. Մշակութային տների կապիտալ վերանորոգում

Մշակութային տների կապիտալ վերանորոգման նպատակով 2023թ. բյուջեում նախատեսել մինչև 34 000,0 դրամ:

7. Բազմաբնակարան շենքերի կապիտալ վերանորոգում

Բազմաբնակարան շենքերի կապիտալ վերանորոգման նպատակով համայնքի բյուջեից նախատեսել որոշակի գումար ընթացիք և կապիտալ ծախսերի համար:

